



ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Անթիլիաս, Լիբանան

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ՈՒ
ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով ու ազգային վառ ապրումներով կ'ողջունենք Ձեզ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մայրավանդէն:

Ներկայ տարին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադրութեան 125-ամեակն է: Արդարեւ, անցնող 125 տարիներուն Հ. Յ. Դաշնակցութիւնը մեր ժողովուրդի հաւաքական կեանքի մայր էջին վրայ դարձաւ մնայուն ներկայութիւն՝ մեր գերագոյն արժէքներուն կենսագործման ու ձգտումներուն իրագործման բերած իր ամբողջական ու յանձնառու մասնակցութեամբ:

Սովորական քաղաքական կուսակցութիւն չեղաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, բառին նեղ ըմբռնումով. այլ դարձաւ, յատկապէս Սփիւռքի մէջ, մեր գաղութներուն կազմակերպչական հզօրութիւն ներարկող ներուժ, մեր ժողովուրդի մարտահրաւէրներն ու տագնապները շրջահայեաց մօտեցումով ու մարտունակ ոգիով դիմագրաւող կազմակերպ ուժ:

Արդ, կարելի չէ հասկնալ վերջին 125 տարիներու մեր ժողովուրդին կեանքը, առանց անդրադառնալու Հ. Յ. Դաշնակցութեան առանցքային ներկայութեան: Կարելի չէ հասկնալ մանաւանդ Սփիւռքի վերջին հարիւր տարիներու պատմութիւնը, առանց Հ. Յ. Դաշնակցութեան նշդորոշիչ դերակատարութեան: Վերջապէս, կարելի չէ հասկնալ հայ ժողովուրդի պահանջատիրական պայքարը, առանց Հ. Յ. Դաշնակցութեան լայնածաւալ աշխատանքին:

Արդարեւ, ցեղասպանին կողմէ մեր ժողովուրդին պարտադրուած Սփիւռքին մէջ հայ մնալը ամէնօրեայ պայքար էր: Այս ահաւոր պայքարին մէջ, Սփիւռքի միւս կուսակցութիւններուն կողքին եզակի եղաւ դերը Հ. Յ. Դաշնակցութեան: Հայ ժողովուրդի կեանքին մէջ, մեր մշակութային արժէքներու պահպանման առաքելութեան մէջ անուրանալի եղաւ նպաստը Հ. Յ. Դաշնակցու-



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անթիլիաս, Լիբանան

թեան: Իր հայրենիքի անկախութիւնը կորսնցուցած ու հայրենագուրկ դարձած ժողովուրդի կեանքին մէջ, եռագոյն դրօշով ամբողջական հայութեամբ ամբողջական Հայաստանի ազգային գաղափարախօսութիւնը ու իտէալը արծարծ պահելու պայքարին մէջ, վնասական եղաւ դերը Հ. Յ. Դաշնակցութեան: Իսկ վերջին տասնամեակներուն, Հայաստանի Հանրապետութեան հզօրացման ու Ղարաբաղի ազատագրական պայքարին մէջ անգնահատելի եղաւ ներդրումը Հ. Յ. Դաշնակցութեան:

Հ. Յ. Դաշնակցութիւնը սոսկ անցեալ չէ սակայն: Անոր կեանքին ու առաքելութեան ազգակերտ ու հայրենաշէն ծառայութիւններով լեցուն անցեալը վկայակոչելը երաշխիքն է ու գրաւականը նորանոր ծառայութիւններով ու իրագործումներով հարուստ ապագայի կերտման: Այսօր, թէ՛ Հայաստանի ու Ղարաբաղի եւ թէ՛ Սփիւռքի դիմագրաւած տագնապներուն ու մարտահրաւերներուն դիմաց անցեալի իր հարուստ փորձառութեամբ օժտուած Հ. Յ. Դաշնակցութիւնը ընելի՛ք ունի:

Հայ ժողովուրդի ծոցէն ծնունդ առած եւ ստրկութեան դէմ պայքարի դրօշ պարգած, ընդհանրական շահերը անձնական շահերէն գերադաս նկատած, փտածութիւն ու կեղեքում յառաջացնող անձերու ու կառոյցներու ընդդիմացած ու նոյնիսկ իր շարքերուն նկատմամբ բարձրագոյն աստիճանի խստապահանջութիւն ցուցաբերած Հ. Յ. Դաշնակցութիւնը այսօր եւս, եւ աւելի՛ով, ընելի՛ք ունի հայ կեանքէն ներս, ամէ՛ն տեղ:

Իր համահայկական կառոյցներով ու մեր ժողովուրդն ու հայրենիքը յուզող հիմնահարցերուն իր համահայկական մօտեցումներով, Հ. Յ. Դաշնակցութիւնը կարելոր ներդրում ունի կատարելի՛ք՝ համահայկական մտածողութեան առաւել մշակման, ինչպէս նաեւ Հայաստան-Ղարաբաղ-Սփիւռք գործակցութեան առաւել խորացման, ծաւալման ու ամրապնդման մեր հաւաքական նիգին:

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակէն յետոյ, մեր ժողովուրդի պահանջատիրական պայքարին մէջ իր տասնամեակներու փորձառութեամբ զինուած, մեր քաղաքական միւս կառոյցներուն եւ Հայաստանի իշխանութեան հետ միասնաբար, Հ. Յ. Դաշնակցութիւնը կարելոր աշխատանք ունի կատարելի՛ք:

Եւ վերջապէս, տակաւ գունաթափող Սփիւռքի մէջ, մեր գաղութները ազգային վերանորոգ կենսունակութեամբ թրծելու անյետաձգելի ու հաւաքական աշխատանքին մէջ, Հ. Յ. Դաշնակցութիւնը անկասկած վնասական դեր ունի:

ARMENIAN CATHOLICOSATE
OF CILICIA

Antelias, Lebanon



كاثوليكوسية
الأرمن الأرثوذكس
أنطلياس، لبنان

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Անթիլիաս, Լիբանան

Եթէ 125-ամեակը Հ. Յ. Դաշնակցութեան համար անցեալին նայելու ու անցեալը արժեւորելու առիթ է, ան նաեւ ու մանաւանդ մեր կեանքի նոր հրամայականներուն դիմաց ինքզինք վերաբնութեան ենթարկելու հրաւեր է: Զերմօրէն կը շնորհաւորենք Հ. Յ. Դաշնակցութեան մեծ ընտանիքը: Վստահ ենք, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը, միշտ մեկնելով մեր ազգի ու հայրենիքի ընդհանրական ու գերագոյն շահերէն, վերանորոգ հաւատով ու նուիրումով պիտի շարունակէ իր ազգային առաքելութիւնը:

Հայրական սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթարար՝

A handwritten signature in red ink, likely of the Catholicos of Cilicia, written in a cursive style.

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

11 Դեկտեմբեր 2015
Անթիլիաս, Լիբանան